# Պետրոս Դուրյան

## Նվեր հիշատակի առ Պ. Հ. Ճանֆեսճյան հո՛ւշք

Սա խաղաղ Մայր Օվկեանին,
Ուր փողփողեն ավազք ոսկի՝
Մեր երազոց վառարանին՝
Թ՝եղրեն՝ վարդից մեջ աճյունի

Երբ արևը շողշողե,
Դու իմ սերը միշտ հիշե՛:

Թավուտքե մը կանաչ ու մորչ,
Որոց շուքը սիրեինք միշտ
Նստիլ, խոսիլ շրթամբք դողդոջ,
Ծրծել անհագ իրարու սիրտ,

Երբ տերև մը խարշափե,
Դու իմ մրմունջքը հիշե՛:

Առավոտներն գարնանային,
Ո՞հ, հորիզոնն ալ վարդավառ՝
Յ՝այց ելնելուդ ծաղկած մարգին,
Ուր կը գտնես մորչ չոր մացառ՝

Երբ թռչնիկ մը ճրռվողե,
Դու իմ իղձերը հիշե՛:

Պաղլար-պաշի եկած ատեն՝
Եվ կամ սա՛ր Չամլրճային՝
Սիրո՞ւն վայրեր ուր միշտ արդեն
Ճեմել հոգիք մեր սիրեին՝

Երբոր զեփյուռ մը փչէ,
Դու իմ հոգին միշտ հիշե՛:

Եվ առօրյա աշխատանքե
Վաստակաբեկ վերադարձիդ՝
Եվ կամ սիրո արշավանքե
Դարձած ատեն տրրոփ ի սիրտ՝

Երբ հորիզոնն հրդեհե,
Դու իմ կրակները հիշե՛:

Ամրան գիշեր մ՚երբոր գտնես
Աստղերն առատ գլխուդ վրրա՝
Եվ լուսինը լապտեր ընես
Դողդոջ քայլից դեպ ՝ի Մոտա,

Երբ շրջազգեստ մը շրշե,
Իմ մաշած սիրտը հիշե՛:

Տրտում նստած դու պատուհան՝
Հառած երկնից այն սևերես՝
Սև մրտածմանց լոկ վառարան
Տժգույն ճակատդ և աչերդ վես՝

Տրխուր կոչնակ մ՚երբ հնչե,
Մրտերմիդ մա՞հը հիշե՛:

Հոկտեմբերի 6, 1871